ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

16 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 178 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 10-ը հուլիսի 2025թ. արձանագրությունը հողամասի՝ աճուրդով վաճառքի արդյունքների մասին, Եղեգիս համայնքի ավագանու 29/04/2025թ. թիվ 57Ա որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ*

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր 10-035-0268-0007, մակերեսը՝ 1.20729հա, որից 0,88999հա վարելահող և 0,3173 հա այլ հողատեսք) 394 243երեք հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր քառասուներեք) ՀՀ դրամով վաճառել քաղաքացի Գնորգ Մարսպետունու Գասպարյանին:

2.Անշարժ գույքերը օտարելու համար օրենքով սահմանված ժամկետում և կարգով կնքել օտարման պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. հուլիսի 16 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

*ՈՐՈՇՈՒՄ*

16 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 179 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի 33.1.-րդ կետի բ) ենթակետը, 33.2.-րդ կետը, 35-րդ կետի բ) ենթակետը, 35.1.-րդ կետը, Եղեգիս համայնքի ավագանու 24/06/2025թ. թիվ 61Ա որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2)-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի Սիրանեսի փողոց թիվ 27/1 հասցեում գտնվող 0.01168 հա հողամասը (ծածկագիր՝ 10-029-0014-0014, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման) և հողամասի վրա ինքնակամ կառուցված 18,5քմ (արտաքին մակերեսը՝ 25,7ք/մ) առևտրի սրահը զննման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին հետևյալ հաշվարկված գումարներով.

ա.25,7 ք/մ ընդհանուր արտաքին մակերեսով առևտրի սրահի համար՝ ընդամենը 145950,3 (մեկ հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր հիսուն ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը,

բ.0.01168հա բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողամասի արժեքը՝ 53927,28 ՀՀ դրամ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի IV. գլխի 33.1. կետի բ) ենթակետը և 33.2. կետը:

Ընդամենը՝ 199877,58 (մեկ հարյուր իննսունինը հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) ՀՀ դրամ:

գ.Վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի IV. գլխի 35.1. կետը:

2.Ավագանու որոշման ընդունման օրվանից, ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում նախատեսված գնման նախապատվության առաջարկը չընդունվելու, կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա սպասարկման համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում, նշված կառույցները և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.01168հա հողամասը կվաճառվի աճուրդով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հուլիսի 16 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

17 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 180 Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԼՅՈՒԴՄԻԼԱ ԱՐՄԵՆԱԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի 10122HV8KNEY ծածկագրով քաղվածքը

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Լյուդմիլա Արմենակի Բարսեղյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0021-0003, մակերեսը՝ 0.025 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 4-րդ փողոց, տուն 10/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հուլիսի 17 գ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

17 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 181 Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼՆԵՐ ՀՐԱՆՏ ՎԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՂՈՒՆԻԿ ՌՈՒԲԵՆ ՎԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի 10122UVRYKHZ ծածկագրով քաղվածքը

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ*

Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալներ՝ Հրանտ Վանյանի (ընտանիքի գլխավորը) և Աղունիկ Ռուբեն Վանյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0013-0034, մակերեսը՝ 0.431 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 12-րդ փողոց, տուն 1/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝      ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. հուլիսի 17     հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 182 Ա

## ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՅՈՒՐԻԿ ՍԱՀԱԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի 10122VLNBTQJ ծածկագրով քաղվածքը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ տեղեկանքը (02/04/2025թ., N ՍՏ-02042025-99-0193)

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Յուրիկ Սահակ Ղազարյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0015-0019, մակերեսը՝ 0.035 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 4-րդ փողոց, 1-ին փակուղի, տուն 1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇԽԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. հուլիսի 17 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

18 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 183 Ա

ԱՐԱ ԲԱԲԿԵՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի 10132NF5L94C ծածկագրով քաղվածքը

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

Եղեգիս համայնքի Սալլի գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Արա Բաբկենի Կիրակոսյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-038-0002-0009, մակերեսը՝ 0.112 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Սալլի գյուղ, 9-րդ փողոց, տուն 4 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ      ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. հուլիսի 18     ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բ.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

18 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 184 Ա

*ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ «ՀՈՍՏՈՒՆ» ԹԱՂԱՄԱՍԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՈՒՐԸ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, նկատի ունենալով, որ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի «Հոստուն» թաղամասի բնակիչների մի մասը խմելու-կենցաղային օգտագործման ջուրը գլխավոր ջրատարից վերցրել են տարբեր տրամաչափի խողովակներով, որի պատճառով որոշ բնակիչների բնակելի տներում խմելու ջուրը դարձել է անհասանելի, ուստի ջրաբաշխումը հավասարաչափ իրականացնելու նպատակով

*Ո ՐՈՇՈՒՄ ԵՄ*

1. Ապամոնտաժել ջրատարից վերցված տարբեր տրամաչափի խողովակները և ջրաբաշխումը կատարել հավասարաչափ՝ 1/2 /կես դյույմ/ տրամաչափի խողովակներով:

2. Հանձնարարել «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենին՝

1) իրականացնել ապամոնտաժման և 1/2 /կես դյույմ/ տրամաչափի խողովակով միացման աշխատանքները:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հուլիսի 18 գ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

*ՈՐՈՇՈՒՄ*

18 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 185 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներն ու Եղեգիս համայնքի ավագանու 24/06/2025թ. թիվ 64Ա որոշումը

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված հողատեսքերը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության.

1)Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Ցորենանոց» կոչվող հանդամասում գտնվող 0,2 հա և 0,4 հա մակերեսներով արոտավայրերի հողատեսքերը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Դավիթ Սաանիկի Հակոբյանին:

2)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Սաանիկ Խաչիկի Հակոբյանին:

3)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Տարոն Ռաֆիկի Դանիելյանին:

4)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 70հա մակերեսով արոտավայրը վարձակալության օգտագործման տրամադրել Արենի համայնքի Չիվա գյուղի բնակիչ Կարապետ Սմբատի Կարապետյանին:

5)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 71հա մակերեսով արոտավայրերի հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Արենի համայնքի Չիվա գյուղի բնակիչ Արմեն Երջանիկի Թադևոսյանին:

6)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 80հա մակերեսով արոտավայրերի հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ գյուղի բնակիչ Ռաֆիկ Սամվելի Վարդանյանին:

7)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Սևաժայռ» կոչվող հանդամասում գտնվող 5հա մակերեսով արոտավայրերի հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Շատին գյուղի բնակիչ Իգոր Լյուդվիգի Սարգսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՈՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հուլիսի 18 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թվականի N 186 Ա

ՄԵՐՈՒԺԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ ԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի 10012EQ7D92W ծածկագրով քաղվածքը

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ*

Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Մերուժան Սարիբեկի Եղյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0005-0005, մակերեսը՝ 0.098 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 20-րդ փողոց, թիվ 28 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇԽԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հուլիսի 21 ք.Եղեգիս